ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ստեփանյան Ա. Ա. (ՀՀ ՊԿԱ, Երևան, Հայաստան)
anush808@yahoo.com
Ներկայացման ամս.՝03.08.2019
գրախոսման ամս.՝ 06.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019

Կառավարչի անձնային որակների վերաբերյալ ժամանակակից գիտակարգերում գոյություն ունեն տարբեր և հիմնավոր մոտեցումներ, սակայն դրանք հաճախ չեն արտացոլում այն պահանջները, որոնք առկա են փոխակերպվող հասարակությունում: Փոխակերպվող հասարակությունը կառավարչի անձնային որակների և մասնագիտական առաջընթացի վերաբերյալ նոր պահանջներ է ներկայացնում, որոնք կարիք ունեն հստակեցման և ձևակերպման: Հաջողակ կառավարչի չափանիշների սահմանումը դժվարանում է մի շարք հանգամանքներով: Վերջիններս ներառում են մշակութային տարբերությունները, փոխակերպվող հասարակության առանձնահատկությունները, մասնագետներին ներկայացվող պահանջների արդիականությունը: Սույն հոդվածում մեր առաջ նպատակ ենք ունեցել դուրս բերել հաջողակ կառավարչի չափանիշները, որոնք ակտուալ և կիրառելի են մեր հասարակությունում: Հետազոտության շրջանակներում իրականացվել է փորձագիտական հարցում՝ հաջողակ կառավարչի անձնային կարևոր որակները առանձնացնելու նպատակով: Ստացված արդյունքները թույլ կտան գնահատել և առանձնացնել հաջողակ կառավարիչներին՝ մասնագիտական կայացման գործընթացի օրինաչափությունները սահմանելու նպատակով:

Հանգուցային բառեր՝ *կառավարիչ, հաջողակ մասնագետ, մասնագիտական կայացում, փոխակերպվող հասարակություն:*

Հասարակության զարգացման և սոցիալ-տնտեսական փոխակերպումները ենթադրում են անձի մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում նոր մարտահրավերներ , որոնք էլ իրենց արտացոլումն են գտնում կառավարման, հոգեբանության և այլ գիտական հետազոտություններում:

Արդի ժամանակաշրջանում անձը ձգտելով հասնել մասնագիտական և կարիերային զարգացման հնարավորինս բարձր աստիճանի ընտրություն է կատարում զարգացման ճանապարհների միջև և հաճախ հաջողակ մասնագետի չափանիշների բացակայության պայմաններում այդ ճանապարհները լինում են բարդ՝ նույնիսկ անարդյունավետ: Մինչ այժմ բաց է մնում այն հարցը, թե ովքեր են համարվում հաջողակ մասնագետներ իրենց գործունեության ոլորտում: Գիտական գրականության մեջ բազմաթիվ են մասնագիտական չափանիշների և պրոֆեսիոնալիզմի վերաբերյալ

աշխատությունները: Սակայն ժամանակակից աշխարհի անընդհատ զարգացող հասարակությունում անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել նոր պահանջները և ուսումնասիրել նախկին չափանիշների փոփոխությունները: Կառավարչական գործունեությունը այսօր հայտնվել է հոգեբանական ուսումնասիրությունների կիզակետում այն հանգամանքից ելնելով, որ ժամանակակից դարաշրջանում առավել կարևորվում է մարդկային ռեսուրսը և դրա կառավարումը: Նպատակ ունենալով հետազոտել և առանձնացնել հաջողակ կառավարիչների կարևոր չափանիշները մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որի արդյունքները թույլ կտան առանձնացնել հաջողակ կառավարիչներին գնահատելու չափանիշները: Կառավարչական գործունեությունը որպես մասնագիտական գործունեության ոլորտ ենթարկվում է մասնագիտական կայացման ընդհանրական մոտեցումներին:

Մասնագիտական կայացման չափանիշների վերաբերյալ հատկանշական են Ա. Մարկովայի, Յ. Պովարենկովի և Դ. Սյուպերի աշխատությունները: Ակմեոլոգիայում մասնագիտական չափանիշների հիմքում պրոֆեսիոնալիզմն է, աշխատանքային գործունեության խնդիրների լուծման ունակությունները [1]: Ա. Մարկովան հավելում է աշխատանքին համապատասխանելու չափանիշները և կարևորում է անձնային հատկանիշները, անձի մոտիվացիոն և արժեքային համակարգերը [3]: Այս կոնտեքստում նշանակություն է տրվում նաև մասնագիտության շրջանակներում անձի ինքնազարգացմանը և ինքնաակտուալիզացիային: Յ. Պովարենկովի աշխատությունում նույնպես մասնագիտական չափանիշները արտացոլում են ինչպես աշխատանքային ձեռքբերումները, այնպես էլ անձի հոգեբանական առանձնահատկությունները [6]: Հետաքրքրական է Դ. Սյուպերի մոտեցումը, ըստ որի հաջողակ մասնագետի առանցքային չափանիշներն են անձի արժեքներն ու մոտիվները և դրանց համապատասխանությունը մասնագիտական գործունեությանը [7]:

Տեսական վերլուծության արդյունքում ստացված տվյալները ընդհանրացնելով, դուրս ենք բերել մասնագիտական կայացման չափանիշների հետևյալ խմբերը.

- մասնագիտական գործունեության մեջ փորձի և գիտելիքների առկայություն,
- մասնագիտական գործունեության գործընթացում որոշումների կայացման ունակություն,
- աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակ,
- մասնագիտության համապատասխանությունը անձի մոտիվներին և արժեքներին,
- տվյալ մասնագիտությունում նպատակների և հեռանկարների առկայություն:
- Ուշադրության է արժանի այն փաստը, որ տարբեր հեղինակների աշխատություններում ընդհանրական մասնագիտական կայացման չափանիշների տրոհումը երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ[4]: Այսպիսով՝ օբյեկտիվ գործոնները արտացոլում են մասնագիտական աճը կազմակերպության ներսում կամ կազմակերպությունից դուրս, իսկ սուբյեկտիվ գործոնները՝ անձի մասնագիտական հաջողությունների ինքնագնահատականը: Հաջողակ մասնագետի առավել տարածված գործոններից նշվում են.

- պաշտոնի մակարդակը մասնագիտական հիերարխիայում,
- մասնագիտական մոբիլությունը, այն է տարբեր պաշտոններում աշխատելու ժամանակահատվածը,
- աշխատանքի դիմաց վարձատրման բարձրացում,
- նվաճումների առկայություն [2]:

Հիմնվելով ստացված տվյալների վրա, իրականացրել ենք փորձագիտական հարցում, որի նպատակն էր դուրս բերել հաջողակ կառավարչին ներկայացնող մասնագիտական չափանիշները: Փորձագիտական խումբը կազմել են 10 տարի և ավել աշխատանքային փորձ ունեցող, 3 տարի և ավել կառավարչական գործունեությունում փորձ ունեցող, տվյալ պահին կառավարչական գործունեություն իրականացնող անձինք:

Որպես հաջողակ մասնագետի/կառավարչի ամենակարևոր անձնային հատկանիշներ, հարցվողների պատասխաններում առավել հաճախ հանդիպում է արդարամտությունը, հուզական կայունությունը, պատասխանատվությունը, մոտիվացումը, նպատակասլացությունը, կենտրոնացվածությունը: Ի պատասխան «որո՞նք են այն ցուցանիշները, որ խոսում են կառավարչի հաջողակ լինելու մասին» հարցին առավել բարձր գնահատականներ (8-10) տրվել են բարձր աշխատավարձի և աշխատանքային մոբիլության ցուցանիշներին: Ի պատասխան «ի՞նչն է կարևոր հաջողակ կառավարիչ լինելու համար» առավել բարձր գնահատականներ (8-10) են տրվել առաջընթացի, աճի հնարավորությանը, ինքնուրույնությանը, հաղորդակցությանը, իմաստի և նշանակություն ցուցանիշներին: Միջին գնահատականներ տրվել են լրացուցիչ հնարավորությունների, բոնուսների ցուցանիշին:

Ստացված արդյունքներում ակնառու է մասնագիտական չափանիշներում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների համատեղ կարևորությունը: Միևնույն ժամանակ հետաքրքրական է հարցվողների կողմից նշված արդարության, կենտրոնացվածության ցուցանիշները, որոնք գրեթե չեն ներառվում կառավարիչներին բնութագրող ցուցանիշներում: Հարկ է անդրադառնալ նաև աշխատանքային մոբիլության ցուցանիշին, որը բավականին բարձր է գնահատվել հետազոտվողների կողմից: Նշված ցուցանիշի նման կարևոր նշանակությունը անշուշտ ժամանակակից հասարակության զարգացումների արդյունք է: Նախկինում տարածված Ե. Մոգիլեվկինի աշխատությունում ներկայացված աստիճանային կարիերան փոխարինվում է այսպես կոչված օձաձև կամ խաչմերուկ կարիերայի տեսակներով: Վերջիններս ենթադրում են տարբեր գործառնային պաշտոններում աշխատանքային գործունեության իրականացում մինչև ղեկավարի պաշտոնի զբաղեցնելը [4]: Այսպիսով հաջողակ կառավարիչներին առանձնացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշները, ինչպես նաև զարգացող հասարակության փոփոխվող պահանջները: Նշված չափանիշները հիմք են հանդիսանում կառավարիչների անձնային առանձնահատկությունների ուսումնասիրման և գնահատման համար ժամանակակից պայմաններում:

Գրականություն

1. **Деркач А.** Акмеология. - М.: Изд. РАГС, 2004. 256 с.
2. **Кричевский Р.** Психологические факторы эффективности руководства первичным коллективом. - Кишинев : Штиинца, 1991. 126 с.
3. **Маркова А.** Психология профессионализма. - М.: Международный гуманитарный фонд «Знание», 1996. 312 с.
4. **Могилёвкин Е.** Карьерный рост: дигностика, технологии, тренинг. Монография. - СПб.: Речь, 2007. 336 с.
5. **Молл Е.** Управление карьерой менеджера. - СПб.: Питер, 2012. 352 с.
6. Поваренков Ю. Психология становления профессионала как отрасль психологической науки. Профессиональное становление личности: Дис. д-ра психол. наук: 19.00.07: Ярославль, 1999. 359 с.
7. **Super D.E.**, et al. Vocational Development: A Framework of Research. N.Y. 1957.

КРИТЕРИИ ОЦЕНКИ ЛИЧНОСТНЫХ КАЧЕСТВ РУКОВОДИТЕЛЕЙ В ТРАНСФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ

Степанян А. А. (АГУ РА, Ереван, Армения)

В статье рассмотрены различные научные подходы к личностным качествам руководителей в современном обществе. Целью нашего исследования было определение критерии успешного руководителя, которые будут иметь актуальное и практичное значение в нашем обществе. В рамках исследования был осуществлён эксперт-опрос, который проведён с помощью составленной нами анкеты для определения важных личностных качеств руководителя. Результаты исследования позволят оценить успешных руководителей для определения закономерностей в процессе профессионального становления.

Ключевые слова: *профессиональное становление, руководитель, трансформационное общество, успешный специалист.*

THE ASSESSMENT CRITERIA OF MANAGER'S PERSONAL QUALITIES IN THE TRANSFORMATIONAL SOCIETY

Stepanyan A.A. (PAA RA, Yerevan, Armenia)

The approaches about manager's personal qualities in modern society are discussed in the article. The article discusses various scientific approaches to the personal qualities of leaders in modern society. The aim of our study was to determine the criteria for a successful leader, which will be relevant and practical in our society.

As part of the study, an expert survey was carried out, which was carried out using the questionnaire we compiled to determine the important personal qualities of the leader. The results of the study will evaluate successful leaders to determine patterns in the process of professional development.

Keywords: *manager, professional development, successful specialist, transformational society.*